

**Գյումրու Վարդանանց հրապարակի եւ Արագած ճեմափողոցի քաղաքաշինական վիճակի
ու պլանավորվող աշխատանքների վերաբերյալ Գյումրու հասարակական
կազմակերպությունների հայտարարությունը**

ՀՀ նախագահ Ս.Սարգսյանին,

ՀՀ Վարչապետ Տ.Սարգսյանին

ՀՀ տարածքային կառավարման նախարար Ա.Գևորգյանին

ՀՀ Քաղաքաշինության նախարար Վ.Վարդանյանին

ՀՀ Շիրակի մարզպետ Ա.Գիզիրյանին

Գյումրու քաղաքապետ Վ.Ղուկասյանին

11 մարտի, 2011թ.

Սույն հայտարարությունը կազմվել է Գյումրիում, 2011թ. մարտի 11-ին՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից, քաղաքապետարանի գլխավոր ճարտարապետի, քաղաքապետի գլխավոր խորհրդականի, քաղաքաշինության բաժնի պետի եւ գլխավոր դենդրոլոգի հետ հանրային քննարկում անցկացնելուց հետո:

Շարունակելով Գյումրի քաղաքի պատմական կենտրոնի կետային կառուցապատումը՝ խախտելով քաղաքաշինական եւ բնապահպանական բազմաթիվ նորմեր, քաղաքային իշխանությունները ըստ էության արհամարում են «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ հողային օրենսգրքի, Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի ու գոտիավորման նախագծի պահանջները:

Գյումրու Վարդանանց հրապարակը (*նախկին Ազատության, Կենտրոնական, Օգոստոսի 23-ի*), որը ըստ գոտիավորման նախագծի նախատեսված էր որպես կանաչ հրապարակ, 2008թ. պատվեց քարե գորգով եւ դա քաղաքային բյուջեից խլեց ավելի քան 180 մլն դրամ (*ավելի քան կես միլիոն դոլար*):

Չերազի եւ Սպանդարյան փողոցները հրապարակին հարող հատվածում իրար միացնող մոտ 80 մ ճանապարհահատվածի կառուցման համար ծախսվեց 52 մլն դրամ եւ հատվեցին ավելի քան 40 ծառ եւ թուփ:

Վերջինիս հարեւանությամբ՝ հրապարակի եւ այդ փողոցի արանքում թողնված կանաչ կղզյակը, որը բաղկացած է ութ եղենիներից, այսօր գտնվում է քաղաքային իշխանությունների քաղաքաշինական հետաքրքրությունների էպիկենտրոնում. դրանք քաղաքապետարանը նախատեսում է տեղափոխել, այնինչ ըստ քաղաքապետարանի գլխավոր դենդրոլոգի՝ տեղափոխելուց հետո նոր վայրում դրանց աճելու հավանականությունը շատ փոքր է:

Ըստ քաղաքի գլխավոր ճարտարապետի հիմնավորման, իբր, քանի որ այդ եղենիները կորցրել են իրենց էսթետիկական տեսքը, փակում են ճարտարապետական մեծ արժեք ունեցող շենքերի ճակատները եւ թույլ չեն տալիս ամբողջացնել հրապարակի անսամբլը, ապա ենթակա են տեղափոխման ու փոխարինման ցածր թփերով ու ծաղիկներով:

2007 թվականի հոկտեմբերից մեր հիշողությունների մեջ դեռես թարմ են Գյումրու Անկախության հրապարակի յոթ եղենիների հատումն ու դրանց փոխարեն գնդաձեւ ակացիներ տնկելու մինչ օրս չիրականացված ավագանու որոշման մասին հուշերը:

Կարծես ողջ Գյումրիում չկա ավելի կարեւոր մեկ այլ քաղաքաշինական խնդիր եւ քաղաքային բյուջեն այնքան մեծ հնարավորություններ ունի, որ քաղաքային իշխանությունները սրտանց կենտրոնացել են միայն ծառերի տեղափոխման վրա, երբ դրանցից յուրաքանչյուրի տեղափոխման ծախսը, ըստ «Լանդշաֆտ դիզայն» ՍՊԸ-ի կատարած նախահաշվի կազմում է 313 714 դրամ:

Վերը նշված հակաեղենային քաղաքականության հաջորդ գոհերը Վարդանանց հրապարակի «Կումայրի» հյուրանոցի դիմացի տասներկու և Գյումրու Արագած ճեմափողոցի ինն եղենիներն են,

որոնք, իբր թե «խաթարում են» հրապարակի և ճեմափողոցի քաղաքաշինական տեսքն ու ենթակա են տեղափոխման:

Պետք է նշել, որ անցյալ տարիների ընթացքում Արագած ճեմափողոցը նախկին չափերից նեղացնելու հաշվին, նրան հարող տարածքները ենթարկվել են այնպիսի հետետողական ու անճաշակ կառուցապատման, որ այսօր այն ճեմափողոց կոչելու եւ բարեկարգելու մասին խոսելը գրեթե ավելորդ է:

2010թ. հասարակության ջանքերով հազիվ դադարեցվեց Արագած ճեմափողոցի կանաչ տարածքում իրականացվող շինարարությունը և չնայած ՀՀ բոլոր մակարդակների պատասխանատու պաշտոնյաներին հղված բողոքներին, մինչ օրս էլ այդ հարցը չի ստացել իր վերջնական լուծումը և ըստ Գյումրու գլխավոր ճարտարապետի տված տեղեկատվության այս հարցը դեռ դառնալու է քաղաքաշինական հանձնաժողովի քննարկման առարկան, չնայած որ ՀՀ Քաղաքաշինության նախարարությունը նախկինում հստակ արտահայտել էր իր տեսակետը այս հարցի վերաբերյալ (*կառուցապատման վերաբերյալ Գյումրու քաղաքապետի 2009թ. փետրվարի 26-ի N 300-Ս որոշումը գտել էր ոչ իրավագոր և առաջարկել էր վերացնել իրականացված ինքնակամ շինարարական աշխատանքների հետևանքները*):

Ելնելով ստեղծված իրավիճակից, մենք Գյումրու ներքոստորագրյալ քաղաքացիներս եւ կազմակերպություններս կարծում ենք, որ այլևս անընդունելի է այս հակաեղնային քաղաքականությունն ու կանաչ տարածքների ոչնչացման հաշվին կառուցապատում իրականացնելու ՏԻՄ-ի գործելակերպը եւ Գյումրու Վարդանանց հրապարակի ու Արագած ճեմափողոցի քաղաքաշինական ներկա վիճակի ու պլանավորվող աշխատանքների վերաբերյալ, առաջարկում ենք.

– Հրաժարվել Վարդանանց հրապարակում եւ Արագած ճեմափողոցում աճող եղենիները տեղափոխելու մտքից, քանի որ եղենիների տեղափոխման գաղափարը համարում ենք չհիմնավորված, չարդարացված ու պարզապես համայնքային միջոցների վատնում:

– Շահումյան փողոց 188 շենքի եւ Վարդանանց հրապարակի միջեւ գտնվող տարածքը (*նախկին բացօթյա սրճարանի տարածքը*) այս տարվա ընթացքում կանաչապատել ու բարեկարգել, կամ նույն նպատակով օրենքով սահմանված կարգով տրամադրել Գյումրու բնապահպանական ոլորտի հասարակական կազմակերպություններին՝ պահպանելով տվյալ տարածքի համայնքային պատկանելությունը:

– Արագած ճեմափողոցի համար օրենքով սահմանված կարգով մշակել կառուցապատման եւ բարեկարգման մեկ համալիր սխեմա, հաշվի առնելով գլխավոր հատակագծի եւ գոտիավորման նախագծի պահանջներն ու չափորոշիչները, ինչպես նաեւ ճեմափողոցի ամբողջական կոմպոզիցիոն եւ ծավալատարածական լուծումներ տալու անհրաժեշտությունը:

– Դեպի Արագած ճեմափողոց ելք ունեցող սպասարկման օբյեկտների սպասարկումն իրականացնելու թույլտվություն տալ դրանց ետնամասերից, արգելելով մեքենաների մուտքը ճեմափողոց, ինչպես Սպանդարյան փողոցի, այնպես էլ Հաղթանակի պողոտայի կողմերից, բացառությամբ օրենքով սահմանված արտակարգ դեպքերի:

– Հրաժարվել ճեմափողոցի մեջտեղում ավտոկայանատեղի տեղակայելու մտքից եւ հնարավորինս մեծացնել կանաչապատման մակերեսը այդ տարածքում:

– Բացառել Արագած ճեմափողոցի եւ նրան հարող տարածքների հետագա կառուցապատումը եւ նեղացումը, գազոնների եւ կանաչ տարածքների հաշվին:

– Արագած ճեմափողոցում տեղակայված շինությունների ճակատային մասերի ճարտարապետական տեսքը ամբողջացնել, ենթարկվելով ոճային ու տրամաբանական մեկ սկզբունքի:

– Պահպանել Արագած ճեմափողոցում աճող ծառերը, անկախ դրանց տեսակից, տարիքից, ինսամվաժության աստիճանից եւ այլ բնութագրիչներից, ինչպես նաեւ դրանք տարբեր քաղաքաշինական լուծումներով ներառել լանդշաֆտի մեջ:

– Չեղյալ հայտարարել Արագած ճեմափողոցի կենտրոնական հատվածում՝ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքում, առևտրի եւ սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով քաղաքացի Ա.Անտիկյանին կառուցապատման իրավունքով հողամասի տրամադրման վերաբերյալ քաղաքապետի 2009թ. փետրվարի 26-ի N300-Ա որոշումը, վերացնել ինքնակամ շինարարական աշխատանքների հետեւանքները եւ տվյալ տարածքը կանաչապատել:

– Կենսամիջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին այսուհետ իրականացնել հանրության պատշաճ իրազեկում եւ անցկացնել հասարակական քննարկումներ՝ համաձայն 28.10.1998թ. Կառավարության թիվ 660 որոշման պահանջների, Գյումրի քաղաքի շահագրգիռ հասարակությանը մասնակից դարձնելով կենսամիջավայրի փոփոխություններին վերաբերող որոշումների կայացման գործընթացին:

N	Անուն Ազգանուն	Կազմակերպություն կամ աշխատավայր
1.	Գևորգ Պետրոսյան	«Բիոստֆիա» ՀԿ
2.	Լևոն Բարսեղյան	Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ
3.	Նադեժդա Հակոբյան	«Մենք պլյուս» ՀԿ
4.	Սեյրան Մարտիրոսյան	Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն ՀԿ
5.	Արմեն Պետրոսյան	«ԽորանԱրդ» ՀԿ
6.	Վահան Թումասյան	«Շիրակ կենտրոն» ՀԿ
7.	Ռաֆայել Մխիթարյան	«Երրորդ բնություն» ՀԿ
8.	Լևոն Մարտիրոսյան	«Գեոֆոն» ՀԿ
9.	Սուսաննա Էլբակյան	«Սրբազան Հող» ՀԿ
10.	Ռոլան Գասպարյան	«Հայէկոմոնիտորինգ» ՊՈԱԿ, Գյումրու լաբ.
11.	Յուրա Հարությունյան	«Գոլոս Արմենիի» թերթի սեփական թղթակից
12.	Արմինե Գմյուր-Կարապետյան	«Արևամանուկ» հիմնադրամ
13.	Աննա Թադևոսյան	«Յոլինե» ՀԿ
14.	Սոնյա Սարգսյան	«Նոր հայացք» ՀԿ
15.	Ալլա Խաչատրյան	«Արաքս կենտրոն» ԲՀԿ
16.	Երանուհի Սողոյան	«Հետք» շաբաթաթերթի լրագրող
17.	Սաթենիկ Կաղզվանցյան	«Գյումրու մամուլի ակումբ» ՀԿ

18.	Նունե Արևշատյան	«Առավոտ» օրաթերթի թղթակից
19.	Սվետլանա Մկրտչյան	ԵԿՔԱ «Ֆլորա» ՀԿ
20.	Արա Սուքիասյան	«Երեխաների հասարակություն» ՄՁԱԿ ՀԿ
21.	Ռուզաննա Բաղդասարյան	«Առաջնորդություն» ՔՀԶԿ» ՀԿ
22.	Հեղինե Մկրտչյան	«Աջակից» ՀԿ
23.	Սերգեյ Գաբրիելյան	«Երաշխիք» ՔՀԿ» ՀԿ
24.	Վեհանուշ Հովհաննիսյան	«Մեղվիկ» ՀԿ
25.	Անահիտ Հակոբյան	«Կրթության ասպարեզ» ՀԿ
26.	Կարինե Գրիգորյան	«Ագաթ» ՀԿ
27.	Գարեգին Պետրոսյան	«Համայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոն» ՀԿ
28.	Հրայրա Մելիք-Սարգսյան	«Դափնեճյուղ» ՀԿ
29.	Արմեն Բեգոյան	«Տարածաշրջանային մոնիտորինգային և գնահատման կենտրոն» ՀԿ
30.	Սվետլանա Ալեքսանյան	«XXI դար - զբաղվածություն» ՀԿ
31.	Խաչիկ Սահակյան	« Ֆերտի» բարեգործական կենտրոն» ՀԿ